№ 161 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 29 1903 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 29 № 161

ԵՐԵՍՈՒՆՄԻԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիւղական վարպետներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Փոքրիկ նկատողութիւններ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նոր պապը. Մակեդոնական հարցի շուրջը. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՏԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Ճանապարհից.

ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐՊԵՏՆԵՐ

—

Ով առիթ է ունեցել այցելել մեր գաւառները, նա անշուշտ նկատել է, որ վերջին ժամանակները եւրոպական գութանները մեծ ընդունելութիւն են գտել մեր գիւղական անտեսութեան մէջ և օրէցօր աւելի ու աւելի տարածվում են։ Գործնական փորձը համոզեց մեր գիւղացուն, որ եւրոպական գութանը աւելի քիչ ոյժով է գործում, քան հին գութանը, օրինակ 10—12 զոյգ եզան փոխարէն բաւականանում է 8—9 զոյգով։ Նոյն փորձը ցոյց տուեց, որ այդ գութանը աւելի հեշտ է կառավարել, քան նախկինը, որ պահանջում էր հող մշակողից առանձին հմտութիւն և մկանունքների մեծ ոյժ։

Գիւղացիների համար մի բան ծանրութիւն և դժուարութիւն է պատճառում, դա այն է, որ գիւղերում չը կան հմուտ վարպետներ, որոնք կարկատէին գութանի փչացած մասերը և այդպիսով հնարաւորութիւն տային երկրագործին չը դադարեցնելու իր հողագործական աշխատանքները և տեղական միջոցներով վերսկսած գործիքները կարգի բերելու։ Այն տեղերում, ուր գութանները աւելի վաղ են մուտք գործել, այնտեղ սկսել են երևան գալ գաղթականներ, որոնք սկսել են գութաններով զբաղվել և ոչ միայն գիտեն կարկատել և ուղղել, այլ և իրանք փորձում են պատրաստել գութաններ։ Անկասկած, կամաց-կամաց այդպիսի վարպետներ առաջ կը գան և բոլոր այն տեղերում, ուր եւրոպական գութանով սկսում է յետ մղվել հին գութանը. բայց մի բան աչքի է ընկնում, որ գութան շինողները բաւականաչափ ծանօթ չեն եւրոպական գութան շինելու սկզբունքների հետ և չը գիտեն յարմարվել հողի զանազանատեսակ յատկութիւններին։ Ճիշդ է, երկար տարիներ շարունակ փորձել անելուց յետոյ վարպետներին աջողվում է գիւղի որոշ հողամասերի համար մշակել այս կամ այն գործիքի տիպը, բայց դա կատարվում է մի շարք սխալներից յետոյ, որոնք վայր են գցում նոր գութանի անունը և նոյն իսկ դրդում են մի քանիներին վերադառնալու նախկին աւանդական գործիքին։

Եթէ մեր երկրի մէջ ունենայինք գութաններ շինելու փոքրիկ արհեստանոցներ, որտեղ դարբինները կամ նրանց աշակերտները հնարաւորութիւն ունենային կանոնաւոր կերպով ծանօթանալու գութանաշինութեան հետ, այն ժամանակ մենք կարող կը լինէինք գիւղական պատանիներից պատրաստել տեղական վարպետներ, որոնք ընակվելով գիւղերում օգնութիւն կը հասցնէին շինականներին իրանց արհեստով։

Այդպիսի արհեստանոցներ հաստատելու հոգսը կարող է վերցնել իր վրա տնայնագործական կոմիտեն կամ առհասարակ երկրագործութեան մինիստրութիւնը։ Պէտք է միայն այդ կարիքի կամ պահանջի մասին լսեցնել տալ այն հաստատութիւններին, որոնք անմիջապէս կամ իրանց միջնորդութեամբ կարող են կատար ածել այդպիսի արհեստանոցներ բանալու առաջարկը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

—

«Մշակի» № 135-ում զետեղված մեր յօդուածը—գաւառներում հակա-ալքօհոլական ընկերութեան բաժանմունքներ ունենալու մասին—ինչպէս երևում է արժանացել է ուշադրութեան և մենք մի քանի տեղերից առայել ենք դիմումներ, որոնք խնդրում են տեղեկացնել այդ ընկերութեան կազմի, նպատակի մասին և թէ ինչպէս վարվել, որ հեշտ լինի հիմնել իրանց մօտ այդ ընկերութեան ճիւղեր։

Ընկերութեան նպատակն է. § 1. ամեն կերպ ընդդիմադրել ոգելից խմիչքներ տարածվելուն հասարակութեան մէջ։ § 2. Այս նպատակին հասնելու համար ընկերութիւնը հիմնում է թէյարան, ճաշարան, ընթերցարաններ և հնար եղածին չափ բուժարան արբեցողների համար, տարածում է գրքեր և բրոշիւրներ բարոյական բովանդակութեամբ, կազմում է իր անդամների համար երեկոյթներ, § 3 և 4. Ընկերութեան անդամ կարող են լինել իւրաքանչիւր մարդ, որը համակրում է այս մտքին և կը հետևէ նրան վճարելով տարեկան 1 ր. կամ 3 ռուբլի։ § 11. ընկերութեան միջոցներն են. ա) անդամակցական վճարներ, բ) նուէրներ, գ) գանձանակ, դ) այն գումարները, որոնք կը գոյանան ընկերութեան կազմած գրական երեկոներից, ներկայացումներից, համերգներից, զբօսանքներից և այլն։

Կարծում ենք, կանոնադրութիւնից արված վերոյիշեալ քաղուածքները լիովին բաւական են, որպէս զի իւրաքանչիւր ընթերցող հասկանայ, թէ որքան համակրելի ընկերութիւն է սա և աշխատողների համար որպիսի լայն ասպարէզ է բացվում գործելու՝ ծրագրի չրջանակներում՝ օգտվելով թէ ուղղակի նշանակված նպատակից և թէ բոլոր այն միջոցներից, որոնցով պէտք է հասնել բուն նպատակին։

Որպէս զի գաւառները հեշտութեամբ կարողանան ունենալ ճիւղեր՝ պէտք է որ հիմնադիր անդամները միասին մի յայտագիր գրեն Թիֆլիսի ընկերութեան վարչութեան նախագահի անունով (нотаріусъ Левань Яковлевичъ Мгебровъ) այս իմաստով, որ «ցանկանալով լինել ընկերութեան անդամ և հիմնել ճիւղ այս ինչ քաղաքում, խնդրում ենք ձեր աջակցութիւնը՝ իրականացնելու մեր այս առաջարկութիւնը։

Առհասարակ այս ընկերութեան վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնների, խորհուրդների և աջակցութեան ծրագիրը ստանալու համար պէտք է դիմել վերոյիշեալ հասցէով, որոնք մեծ պատրաստակամութեամբ և ուրախութեամբ կը կատարվեն։

Վերջացնելով այս մեր փոքրիկ տեղեկութիւնը ևս, մեր գաւառների ուշադրութիւնն ենք գրաւում դէպի այս գրաւիչ և նպատակայարմար ընկերութիւնը գաւառների համար ընկերութիւնը։

Անյուշ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, յուլիսի 28-ին, Երևանից եկող երկաթուղու գնացքը ուշացաւ 3½ ժամ։ Պատճառը՝ ճանապարհի խանգարումն էր, որ առաջացել էր հեղեղներից Աղին կայարանի մօտ։

—

Երէկ, յուլիսի 26-ին, մեր խմբագրատուն մտան երկու երիտասարդ լաւիչ ճանապարհորդներ,—Անդրէյ Սկուլեա և Ֆրից Զվենգիվեզ,—որոնք մտադրութիւն ունեն ոտքով պտտել աշխարհի շուրջը։ Նրանք դուրս են եկել Կուրլանդիայի Գրոբին քաղաքից և ոտքով անցնելով ամբողջ Ռուսաստան՝ հասել են Թիֆլիս։ Ճանապարհորդները ցանկութիւն ունեն մի շաբաթ մնալ Թիֆլիսում և ապա ուղևորվել դէպի Պարսկաստան, որտեղից նրանք կանցնեն Հնդկաստան, ապա Ցէյլոն կղզին, Աւստրալիա, Ամերիկա և Հարաւային Աֆրիկա։ Այնտեղից ճանապարհորդները կը վերադառնան Եւրոպայի արևմտեան երկիրները և ապա Ռուսաստան։ Անդրէյ Սկուլեա և Ֆրից Զվենգիվեզ դրամական ոչ մի միջոց չեն վերցրել իրանց հետ ճանապարհորդութեան համար, նրանք թղթակցում են մի լաւիչ լրագրի, որից ստացած հոնօրարով և պօստ-կարտեր վաճառելով (որոնց վրա կան իրանց պատկերները) կատարում են ճանապարհորդութիւնը։

—

Թիֆլիսի նահանգական այն առեանում, որի իրաւասութեանն են ենթարկված գիւղացիական գործերը, կազմված է մի ընդարձակ զեկուցում Թիֆլիսի մեչչանների և արհեստաւորական վարչութիւնների կազմակերպութիւնը հիմնական փոփոխութեան ենթարկելու մասին։ Մտադրութիւն կայ յիշված վարչութիւնները վերացնել և նրանց գործերը կենդրոնացնել քաղաքային հասարակական ինքնավարութեան մէջ։

—

Կիրակի, յուլիսի 27-ին, Հալաթարում, ժողովրդական թատրոնում կայացաւ հայ թատրաբէրների 29-րդ ժողովրդական ներկայացումը, որ բաղկացած էր թատրոնական և համերգային բաժիններից. խաղացին երկու վոդէվիլ—«Մկնիկ» և «Վոյ քի իմ վեչէր»։ Վոդէվիլները բաւական աշխոյժ անցան և զուարճութիւն պատճառեցին։ Համերգային բաժինն էլ բաւական լաւ էր կազմված։ Երիտասարդ Պապեանի ղեկավարութեամբ երգում էր երգեհոնխումբը, որի անդամները մեծ մասամբ հանդուցեալ Կարա-Մուրզայի և պ. Եկմալեանի երգիչներից էին։ Աջող երգվեցին «Շողեր», «Աղաղեազ», «Ով հայոց Աստուած» երգերը։ Պ. Պապեան երգեց ոսլօ «Կռունկ», «Սիրուհիս, քեզ համար» ու «Լուսնակ գիշեր», և արժանացաւ բուռն ծափահարութիւնների։ Պ. Պապեան դեռ երիտասարդ է, ձայնը բաւական դուրեկան։ Որքան մեզ յայտնի է՝ նա մտադիր է շարունակել իր երաժշտական կրթութիւնը։ Սակայն կարօտ է նիւթական օգնութեան։ Թատրոնը ծայրէ ի ծայր լիքն էր։

—

«Од. Нов.» լրագրի տալով, հրէաների գաղթականական շարժումը Ելիզավէտգրադից և նրա չրջանից դէպի Ամերիկա վերջին ժամանակներս ընդունում է աւելի և աւելի մեծ չափեր։ Ցունիս ամսի ընթացքում գաղթել են մօտ 300 ընտանիքներ։ Յուլիսին իւրաքանչիւր օր գաղթում են 10—20 ընտանիքներ։ «Волынь» լրագրի տալով, վերջին ժամանակ հարաւարևմտեան երկաթուղիներով ևս անցնում են բազմաթիւ հրէական ընտանիքներ և առանձին բերդաքաղաք սահմանագլխի վրա և ստացաւ Ալէքսանդրօպոլ անունը։ Շրջակայ գիւղերում հաւաքված թիւրքահայերը, գլխաւորապէս Էրզրումից և Բայազէտից գաղթածները, տեղափոխվեցին նոր քաղաքը, Եւ ահա այսօր կայ Ալէքսանդրօպոլ գաւառական խոշոր քաղաքը, որ ունի երկու առանձնայատկութիւն. մէկ՝ որ տարիներով շատ երիտասարդ է, միւս՝ որ հարաբերաբար զուտ հայաբնակ է։ Այս վերջին առանձնայատկութեան տեսակէտից Ալէքսանդրօպոլը չունի իր նմանը։ Կան նրա մէջ փոքր թիւով ուրիշ ազգութիւններ էլ, օրինակ յոյներ, բայց հայ տարրի դերակշռութիւնը այնքան ուժեղ է, որ այդ ազգութիւնները խօսում են հայերէն։

Բաղդաւոր աստղի տակ է ծնվել երիտասարդ քաղաքը։ Շիրակի մի կտորն է նա, բացի հացից ոչինչ չունի իբրև արտադրութեան առարկայ։ Առևտուրը տեղական նշանակութիւն ունի և չէ կարող լայն ծաւալ ստանալ։ Բայց և այնպէս, որքան խնամք է թափվել նրա վրա։ Պատճառն այն էր, որ նա բերդ էր երկու միմեանց հակառակ պետութիւնների սահմանագլխի վրա։ Այդտեղ միշտ մեծ բանակ էր գտնվում. իսկ երկու անգամ, 1855-ին և 1877-ին, քաղաքը տեսաւ պատերազմներ Թիւրքիայի դէմ։ Նա ռուսաց զօրքի յենակէտն էր։ Ռուսերից ճանապարհորդները կը վերադառնան Եւրոպայի արևմտեան երկիրները և ապա Ռուսաստան։ Անդրէյ Սկուլեա և Ֆրից Զվենգիվել դրամական ոչ մի միջոց չեն վերցրել իրանց հետ ճանապարհորդութեան համար, նրանք թղթակցում են մի լաւիչ լրագրի, որից ստացած հոնօրարով և պօստ-կարտեր վաճառելով (որոնց վրա կան իրանց պատկերները) կատարում են ճանապարհորդութիւնը։

—

Թիֆլիսի նահանգական այն առեանում, որի իրաւասութեանն են ենթարկված գիւղացիական գործերը, կազմված է մի ընդարձակ զեկուցում Թիֆլիսի մեչչանների և արհեստաւորական վարչութիւնների կազմակերպութիւնը հիմնական փոփոխութեան ենթարկելու մասին։ Մտադրութիւն կայ յիշված վարչութիւնները վերացնել և նրանց գործերը կենդրոնացնել քաղաքային հասարակական ինքնավարութեան մէջ։

—

Կիրակի, յուլիսի 27-ին, Հալաթարում, ժողովրդական թատրոնում կայացաւ հայ թատրաբէրների 29-րդ ժողովրդական ներկայացումը, որ բաղկացած էր թատրոնական և համերգային բաժիններից. խաղացին երկու վոդէվիլ—«Մկնիկ» և «Վոյ քի իմ վեչէր»։ Վոդէվիլները բաւական աշխոյժ անցան և զուարճութիւն պատճառեցին։ Համերգային բաժինն էլ բաւական լաւ էր կազմված։ Երիտասարդ Պապեանի ղեկավարութեամբ երգում էր երգեհոնխումբը, որի անդամները մեծ մասամբ հանդուցեալ Կարա-Մուրզայի և պ. Եկմալեանի երգիչներից էին։ Աջող երգվեցին «Շողեր», «Աղաղեազ», «Ով հայոց Աստուած» երգերը։ Պ. Պապեան երգեց ոսլօ «Կռունկ», «Սիրուհիս, քեզ համար» ու «Լուսնակ գիշեր», և արժանացաւ բուռն ծափահարութիւնների։ Պ. Պապեան դեռ երիտասարդ է, ձայնը բաւական դուրեկան։ Որքան մեզ յայտնի է՝ նա մտադիր է շարունակել իր երաժշտական կրթութիւնը։ Սակայն կարօտ է նիւթական օգնութեան։ Թատրոնը ծայրէ ի ծայր լիքն էր։

—

«Од. Нов.» լրագրի տալով, հրէաների գաղթականական շարժումը Ելիզավէտգրադից և նրա չրջանից դէպի Ամերիկա վերջին ժամանակներս ընդունում է աւելի և աւելի մեծ չափեր։ Ցունիս ամսի ընթացքում գաղթել են մօտ 300 ընտանիքներ։ Յուլիսին իւրաքանչիւր օր գաղթում են 10—20 ընտանիքներ։ «Волынь» լրագրի տալով, վերջին ժամանակ հարաւարևմտեան երկաթուղիներով ևս անցնում են բազմաթիւ հրէական ընտանիքներ և առանձին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀԻՑ

III

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼ

—

Ադրիանուպօլսի դաշնադրութիւնը, որով վերջացաւ ռուսների յաղթական պատերազմը Թիւրքերի դէմ (1828—1829), ունէր մի առանձին յօդուած, որ իրաւունք էր տալիս Թիւրքահպատակ քրիստոնեաներին գաղթել ռուսաց հողը։ Արդ յօդուածը վաղօրօք պատրաստած մի ընդարձակ ծրագրի հետևանք էր։ Քրիստոնեաների գաղթականութիւնը հարկաւոր էր Ռուսաստանին և նա պատրաստվեց մեծ չափերով, ինչպէս XVIII դարի երկրորդ կէսում պատրաստված ու զլուխ էր բերված քրիստոնեաների մեծ գաղթականութիւնը Ղրիմից դէպի ռուսական սահմանները։

Դաշնադրական իրաւունքից, ինչպէս յայտնի է, օգտվեցին մօտ 100 հազար հայեր։ Այդ ահագին բազմութիւնը վեր կացաւ տեղից և շարժվեց դէպի արևելք։ Նա ցանկալի հիւր էր, որին ռուսաց սահմանի վրա սպասում էին գրկաբաց։ Կոմս Պասկեվիչը ամեն կերպ խնամք էր տանում, պետական գանձարանը մեծ գումարներ բաց թողեց, որպէս զի ժողովուրդը, հնար եղածին չափ, առանց դժուարութիւնների և տառապանքների տեղափոխվի և հաստատվի իր նոր հայրենիքում։

Գաղթականներին ազատ իրաւունք էր տուած ընտրել հող, ուր կը կամենան։ Ախալցխայի կողմերը եկած հայերին առաջարկվեց բնակվել Թիֆլիսի մօտ։ Բայց նորեկները անվճռականութեան մէջ էին։ Մովսէսի առաջնորդութեամբ դէպի Աւետաց երկիրը գնացող հրէաների պէս ու վաչը Եգիպտոսի սոխի ու սխտորի համար՝ վերին աստիճանի բնորոշ է գաղթող ժողովուրդների հոգեկան դրութիւնը հասկանալու նկատմամբ։ Թիւրքահայերը, չը նայած ռուս կառավարութեան խնամքներին, սրտով իրանց թողած հայրենիքում էին։ Եղան վերադարձողներ, բայց սովորաբար այդպիսիները քիչ են լինում մեծ գաղթականական շարժումների ժամանակ։ Մեծամասնութիւնը մնաց, բայց դեռ սպասողական դրութեան մէջ էր, ուստի աշխատում էր չը հեռանալ ռուս-Թիւրքական սահմանագլխից, որպէս զի հարկաւոր ժամանակ հեշտ լինի վերադառնալը։

1834 թիւին Գիւմրի անունով գիւղին, որ գտնվում էր Արփաչայի վրա, վիճակվեց մի նոր բաղդ. նա դարձաւ առաջնակարգ, կարևոր բերդաքաղաք սահմանագլխի վրա և ստացաւ Ալէքսանդրօպոլ անունը։ Շրջակայ գիւղերում հաւաքված թիւրքահայերը, գլխաւորապէս Էրզրումից և Բայազէտից գաղթածները, տեղափոխվեցին նոր քաղաքը, Եւ ահա այսօր կայ Ալէքսանդրօպոլ գաւառական խոշոր քաղաքը, որ ունի երկու առանձնայատկութիւն. մէկ՝ որ տարիներով շատ երիտասարդ է, միւս՝ որ հարաբերաբար զուտ հայաբնակ է։ Այս վերջին առանձնայատկութեան տեսակէտից Ալէքսանդրօպոլը չունի իր նմանը։ Կան նրա մէջ փոքր թիւով ուրիշ ազգութիւններ էլ, օրինակ յոյներ, բայց հայ տարրի դերակշռութիւնը այնքան ուժեղ է, որ այդ ազգութիւնները խօսում են հայերէն։

Բաղդաւոր աստղի տակ է ծնվել երիտասարդ քաղաքը։ Շիրակի մի կտորն է նա, բացի հացից ոչինչ չունի իբրև արտադրութեան առարկայ։ Առևտուրը տեղական նշանակութիւն ունի և չէ կարող լայն ծաւալ ստանալ։ Բայց և այնպէս, որքան խնամք է թափվել նրա վրա։ Պատճառն այն էր, որ նա բերդ էր երկու միմեանց հակառակ պետութիւնների սահմանագլխի վրա։ Այդտեղ միշտ մեծ բանակ էր գտնվում. իսկ երկու անգամ, 1855-ին և 1877-ին, քաղաքը տեսաւ պատերազմներ Թիւրքիայի դէմ։ Նա ռուսաց զօրքի յենակէտն էր։ Ռուսերից ճանապարհորդները կը վերադառնան Եւրոպայի արևմտեան երկիրները և ապա Ռուսաստան։ Անդրէյ Սկուլեա և Ֆրից Զվենգիվել դրամական ոչ մի միջոց չեն վերցրել իրանց հետ ճանապարհորդութեան համար, նրանք թղթակցում են մի լաւիչ լրագրի, որից ստացած հոնօրարով և պօստ-կարտեր վաճառելով (որոնց վրա կան իրանց պատկերները) կատարում են ճանապարհորդութիւնը։

—

Թիֆլիսի նահանգական այն առեանում, որի իրաւասութեանն են ենթարկված գիւղացիական գործերը, կազմված է մի ընդարձակ զեկուցում Թիֆլիսի մեչչանների և արհեստաւորական վարչութիւնների կազմակերպութիւնը հիմնական փոփոխութեան ենթարկելու մասին։ Մտադրութիւն կայ յիշված վարչութիւնները վերացնել և նրանց գործերը կենդրոնացնել քաղաքային հասարակական ինքնավարութեան մէջ։

—

Կիրակի, յուլիսի 27-ին, Հալաթարում, ժողովրդական թատրոնում կայացաւ հայ թատրաբէրների 29-րդ ժողովրդական ներկայացումը, որ բաղկացած էր թատրոնական և համերգային բաժիններից. խաղացին երկու վոդէվիլ—«Մկնիկ» և «Վոյ քի իմ վեչէր»։ Վոդէվիլները բաւական աշխոյժ անցան և զուարճութիւն պատճառեցին։ Համերգային բաժինն էլ բաւական լաւ էր կազմված։ Երիտասարդ Պապեանի ղեկավարութեամբ երգում էր երգեհոնխումբը, որի անդամները մեծ մասամբ հանդուցեալ Կարա-Մուրզայի և պ. Եկմալեանի երգիչներից էին։ Աջող երգվեցին «Շողեր», «Աղաղեազ», «Ով հայոց Աստուած» երգերը։ Պ. Պապեան երգեց ոսլօ «Կռունկ», «Սիրուհիս, քեզ համար» ու «Լուսնակ գիշեր», և արժանացաւ բուռն ծափահարութիւնների։ Պ. Պապեան դեռ երիտասարդ է, ձայնը բաւական դուրեկան։ Որքան մեզ յայտնի է՝ նա մտադիր է շարունակել իր երաժշտական կրթութիւնը։ Սակայն կարօտ է նիւթական օգնութեան։ Թատրոնը ծայրէ ի ծայր լիքն էր։

—

«Од. Нов.» լրագրի տալով, հրէաների գաղթականական շարժումը Ելիզավէտգրադից և նրա չրջանից դէպի Ամերիկա վերջին ժամանակներս ընդունում է աւելի և աւելի մեծ չափեր։ Ցունիս ամսի ընթացքում գաղթել են մօտ 300 ընտանիքներ։ Յուլիսին իւրաքանչիւր օր գաղթում են 10—20 ընտանիքներ։ «Волынь» լրագրի տալով, վերջին ժամանակ հարաւարևմտեան երկաթուղիներով ևս անցնում են բազմաթիւ հրէական ընտանիքներ և առանձին

Ոսկին ջրի պէս է թափվել այստեղ՝ պատերազմական պէտքերի համար և բնակիչները այժմ էլ յիշում են հունձի այն առատ տարիները։ Վերջին պատերազմից յետոյ կարսը խլեց Ալէքսանդրօպոլի նշանակութիւնը. բայց սա չէր նշանակում, թէ Ալէքսանդրօպոլը երեսի վրա ձգված պիտի մնայ։ Այժմ էլ այնտեղ կայ մեծ զինուորական բանակ, իսկ բերդը դարձել է զինուորական մթերքների մեծ պահեստ ամբողջ Անդրկովկասի համար։ Ալէքսանդրօպոլը ուշադրութիւնից չընկաւ։ Նոյն բաղդաւոր աստղը, նոյն ռուս-Թիւրքական սահմանագլխի հարցը, հովանաւորեց նրան և այն ժամանակ, երբ պէտք էր կարսը երկաթուղով կապել Թիֆլիսի հետ։ Տասնեակ միլիոններ ծախվեցան, Դիլիջանի կիրճը մի կողմ թողնվեց և Ալէքսանդրօպոլում կառուցվեց մի սիրուն, ապիտակ վոկզալ։ Այսօր Բաքուից կամ Թիֆլիսից Ագուլիս, Օրդուբաթ կամ Մեղրի գնացողը պիտի մի անգին պտոյտ անէ, մօտենայ ռուսաց արևմտեան սահմանին, նայէ Ալէքսանդրօպոլին և ապա միայն ծուի, շարունակէ իր ճանապարհը դէպի հեռու արևելք։ Ամբողջ Արարատեան հարուստ և բերրի դաշտը կապված է Ալէքսանդրօպոլի հետ։ Շուտով այդ երկաթուղին միջազգային կը դառնայ։ Ալէքսանդրօպոլցին ծառից պտուղ չէ քաղում,

անհատներ, որոնց բոլորի նպատակն էլ Ամերիկա գաղթելն է։

—

ՇՈՒՇՈՒԻ մեզ գրում են. «Յուլիսի 24-ին թեմական դպրոցի դահլիճում կայացաւ կոնսերվատորիայի ուսանող Գ. Միրզայեանի համերգը։ Խումբը երգեց մի քանի ազգային և ժողովրդական երգեր։ Զը դիտենք ինչ միտք ունէր կոտրված ակցենտով. երգել ռուսական բոմանսներ ցիգանների բեպկերտուարից, որ մենք լսել էինք առանց այն էլ պ. Լավրովի կաֆէ-չանտանային համերգներում։ Թատրոնում բաւականին հաստակութիւն կար։»

—

ՀԱՋԻՂԱՐԱՑԻՑ (Ելիզաւետպոլի գաւառ) մեզ գրում են. «Այս չորս տարի չարունակ մեզանում ամառ ժամանակ երևացող բորենին դարձեալ յայտնվեց մեր գաւառում այս յուլիս ամսից սկսած։ Նա յափշտակեց մեր գաւառի Քեռափալու գիւղից մի չորս տարեկան երեխայի և մի ութ տարեկան երեխայի էլ վիրաւորեց գլխից։ Առաջին դէպքը պատահել է այսպէս. մօտ կէս գիշերին յափշտակված երեխայի մայրը նստում է իրանց սենեակի կտուրը անկողնում պառկած երեխային կերակրելու։ Ցանկարծ ստուերանման յայտնվում է յիշեալ գազանը և խլելով մօր ձեռքից երեխային, անհետանում է։ Մայրը իսկոյն «հաւաբ» է գցում և գիւղացիները հաւաքվելով, սկսում են հրացան արձակել և երկար փնտռել դաշտում երեխային, այն ինչ գիշատիչ գազանը փախչում է երեխային տանից, ոչ աւել, քան քանի քայլ հեռաւորութեամբ, որտեղ և պառառում ու լափում է անբաղդ երեխային ու հեռանում, թողնելով միայն երեխայի շապիկը, և մարմնից մի քանի մնացորդներ՝ երիկամունքը, մի թեւը և կողերից մի հատ։ Գիւղացիները առաւօտեան այս մնացորդները տանում են գերեզմանատուն, թաղում են։ Ի հարկէ ընթերցողները կերևակայեն, թէ ինչ զարմանք տիրեց գիւղացիներին, երբ միւս օրը գնացին և տեսան, որ այս մնացորդներն ևս գերեզմանից հանված են։ Ժողովուրդը զանազան երևակայական կարծիքներ է յայտնում թէ իբրև այս գազանը մարդ է, ուստի և մարդագել է կոչվում։»

—

ՋԱԼԱԼ-ՕՂԼՈՒ մեզ գրում են. «Կիրակի, յուլիսի 20-ին դերասան Մ. Մարիկեանը տուեց իր երկրորդ ներկայացումը։ Խաղացին «Աբլան-Բալաքի» և «Ադամ ու Եւա»։ Խաղը սպասածից աւելի սահուն անցաւ, սակայն ափսոս, որ թատրոնը կիսով չափ դատարկ էր։ Գեղեցիկ էին իրանց դերերում օր. Ղարագեօղլան, պ. Աղեան և Երզնկեան։ Ներկայացման անաբաններին նուագում էր Ա. Թումանեանցի խումբը։ Պ. Մարիկեանը ստացաւ մի քանի ընծաներ։ Ժողովուրդը գոհ էր։»

—

ԳԵԱՏԻԳՕՐՍԿԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 20-ին պ. Յարութիւնեանը և տ. Մելիքեանը, մասնակցութեամբ տեղիս սիրողների և խմբապետ Մանուկեանի, տուին մի ներկայացում համերգով։ Համերգը պ. Մանուկեանի ղեկավարութեամբ, ինչպէս միշտ, շատ լաւ անցաւ։ Ներկայացրին «Փաստաբանի մօտ» փոխադրութիւն Ա. Դաւթեանի։ Գլխաւոր դերերը կատարում էին պ. Յարութիւնեանը և տ. Մելիքեանը։ Ներկայացումը ապատածից աւելի աջող անցաւ և վերջացաւ զաւէշտով. կարդացվեցին մի քանի ոտանաւորներ. կարդաց նաև պ. Յարութիւնեանը. Դահլիճը կիսով չափ լիքն էր։»

—

ՎԷՐԻՆ-ՇԷՆ գիւղից (Գանձակի գաւառ) մեզ գրում են. «Այսօր, յուլիսի 24-ին սկսեց սարսափելի կարկուտ գալ, որից բոլոր չը հնձած արտերը փչացան։ Արտերի համարեա մի 1/3 մասն է հնձած, խոտհարքերն էլ նմանապէս։ Տանուտէրը մի քանի մարդկանց հետ գնացին Վնասի որքանութիւնը որոշելու և արձանագրութիւն կազմելու։ Վնասը կը հասնի մի քանի հազարների։ Գիւղացիք յուսահատ դրութեան մէջ են, մանաւանդ նրա համար, որ տարվայ այնպիսի ժամանակն է, որ չէ կարելի ցանել կորեկ, կամ որ և է ուրիշ հացահատիկներ։ Փչացան նոյնպէս ձիթահատիկները։»

—

ՀԱՄԶԱՋԻՄԱՆԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 20-ին պ. Քալանթարը, գալով մեզ մօտ—Համզաշիման և հաւաքելով գիւղացիներին, մի դասախօսութիւն կարդաց կաթնատնտեսութեան մասին։ Հետը բերել էր կաթից արաժան զատող մեքենան, որի միջոցով գործնական կերպով և հարկաւոր բացատրութիւններով զատեց արաժանը կաթից։ Պ. Դասախօսը բոլորի համար հասկանալի լեզուով բացատրեց մեքենայի կազմակերպութիւնը և այն օգուտները, որոնք կապված են այդ մեքենայի հետ։ Դասախօսութիւնը վերջանալուց յետոյ, պ. Քալանթարը գնաց հարևան մոլոկանների գիւղը՝ Նիկիտինո, որտեղ արդէն մուտք է գործել յիշեալ մեքենան։ Նիկիտինում պ. Քալանթարը գլխաւորապէս խօսեց տաւարապահութեան և կաթնատնտեսութիւններից շատ կաթ ստանալու մասին։ Երկրորդ օրը մեքենան տարան մեր գիւղի սարերը իւղ պատրաստելու համար։»

—

ԿԱՐՃԵՒԱՆ գիւղից մեզ գրում են. «Ամբողջ երկու ամիս է անձրևի երես չենք տեսել. ստատիկ չոգեր է անում։ Երեխաների մէջ տարածված է աչքացաւը. ոչ մի երեխայ չէ ազատվում այս հիւանդութիւնից։ Հիւանդ երեխաները օրերով աչքերը խփած կոյրի պէս նստած են տանը. բժշկական ոչ մի օգնութիւն չը կայ։ Խեղճ ծնողները ինչ ասէք, որ չածեցին ցաւող աչքերի մէջ՝ դուբի, օդիկոլոն և ուրիշ շատ բաներ։ Աւելացրէք սրա վրա նաև այս տարվայ թունաւոր խայթող մեղուների ահագին բազմութիւնը, որ խածում են նոյն իսկ մեծերին և ուռցնում ամբողջ դէմքը։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԳԱԳԸ

Ինչպէս արդէն յայտնի է, կոնկլավը Լևոն XIII-ի յաջորդ ընտրեց Վենեցիայի պատրիարք, կարդինալ Ջուզէպպէ Սարտոին, որը ընդունեց Պիոս X-ի անունը։

Լևոն XIII-ի հիւանդութեան հէնց սկզբից Սարտո անունը յիշվում էր պապական գահի հնարաւոր թեկնածուների թւում, բայց իր սեփական որ և է նշանակութիւն ունեցող կուսակցութիւն նա չունէր և այդ պատճառով նրա թեկնածութիւնը կարող էր աջողութեան յոյս ունենալ միայն այն դէպքում, եթէ վատիկանեան խոշոր կուսակցութիւններից ոչ մէկը չը կարողանար անցկացնել իր թեկնածուին և ստիպված լինէր կոմպրոմիսի դիմել։ Այդպէս էլ պատահեց. ոչ Բամպոլան, ոչ Վանուտէլլին, ոչ Օրէլիան, ոչ մնացած յայտնի թեկնածուները, որոնք բազմաթիւ կողմնակիցներ ունեն, բայց և բազմաթիւ հակառակորդներ, չը կարողացան ձայների երեք քառորդը հաւաքել յոգուտ իրանց, և կոնկլավի ընտրութիւնը կանգ առաւ վերջ ի վերջոյ համեստ և քիչ աչքի ընկնող Սարտոի վրա, որը մինչև այժմ որ և է խոշոր դեր չէ խաղացել։

Նոր պապը դէմոկրատական ծագում ունի և ծնվել է 1885 թ-ին Տրէվիզոում։ Նա ուսում էր առնում Կաստէլֆրանկոում և Պադուայում, քահանայ էր Կաստէլֆրանկոում, Տոմբելոում, Սալցանոում, իսկ Տրէվիզոում եպիսկոպոսական յաջորդ էր և, վերջապէս, 1884 թ-ին եպիսկոպոսական աթոռ ստացաւ Մանտուայում։ 1893 թ-ին թափուր մնաց Վենեցիայի պատրիարքական աթոռը, և նոր պատրիարքի նշանակումը շատ դժուարացաւ։ Աշխարհական իշխանութիւնը պնդում էր, թէ իր իրաւունքն է պատրիարք նշանակելը, և չէր համաձայնվում ճանաչել այն թեկնածուներին, որոնց նշանակում էր Վատիկանը։ Միայն երկար բանակցութիւններից յետոյ երկու կողմերը, վերջապէս, համաձայնութիւն կայացրին, և աշխարհական իշխանութեան համաձայնութեամբ Վենեցիայի պատրիարք նշանակվեց Սարտո, որը մի և նոյն ժամանակ ստացաւ և կարդինալի կոչում։

Թէ Մանտուայում և թէ Վենեցիայում Սարտո զբաղվում էր գլխաւորապէս եկեղեցու ներքին գործերով և աշխատում էր հեռու մնալ քաղաքականութիւնից։ Նա առհասարակ խուսափում էր որոշակի արտայայտել իր քաղաքական և հասարակական հայեացքները, բայց այնուամենայնիւ նա ոչ առանց հիմքի վայելում է չափաւոր ուղղութեան և խաղաղասէր քաղաքականութեան մարդու համբաւ։ Բաւական համբերող աչքով նայելով նորագոյն հասարակական և մտաւոր հոսանքների վրա, Սարտո հեռու էր եկեղեցու համատարած իշխանութեան ցնորքներից և լաւ յարաբերութիւններ էր պահպանում աշխարհական իշխանութիւնների հետ։ Նա այդ կողմից այնքան հեռու էր գնում, որ յաճախակի Վատիկանի դժգոհութեան առարկայ էր դառնում։ Վենեցիայում Ումբերտո թագաւորի տեսակցութեան ժամանակ Վիլհէլմ կայսրի հետ Սարտո, հակառակ Վատիկանից ստացված հրահանգների, ներկայացաւ թագաւորին և երկարատև խօսակցութիւն ունեցաւ նրա հետ, մի բան, որը իր ժամանակ մեծ սենսացիա առաջացրեց Իտալիայում։

Պիոս X-ը, շատ կարելի է, միշտ չէ կարող ղեկավարվել իր անձնական հայեացքներով, որովհետև դեռ ևս յայտնի չէ, թէ նա կունենայ բաւական եռանդ և ոյժեր՝ վատիկանեան քաղաքականութեանը նոր ուղղութիւն տալու համար, բայց յամենայն դէպս ապագայում աւելի յոյս կայ տեսնել հաշտութիւն Վատիկանի և Կվիրինալի միջև, քան յարաբերութիւնների վատանալը նրանց միջև։

բայց իր սեղանի վրա ունի Բուքայիսի կեռաս և Երևանի դեղձ։ Համաձայնեցէք, որ այսպիսի բացառիկ բաղդի չէն արժանացել մեր գաւառական շատ խոշոր ու հարուստ քաղաքները։ Ցիշեցէք հէնց դժբաղդ Շամախին, որ տարիներից ի վեր աղաչում է տալ իրան երկաթուղու մի գիծ՝ իբրև կենդանութեան միակ միջոց։

Այս բոլորից յետոյ ինքն ըստ ինքեան առաջ գալիս է այն հարցը՝ թէ ինչ է արել Ալէքսանդրոպոլը իր 70-ամեայ կեանքի ընթացքում սեփական բարեբաղդութեան համար։

Ով տեսել է մեր գաւառական շատ քաղաքները, նոյն իսկ մի քանի նահանգականներն էլ, նա չէ կարող ասել, թէ Ալէքսանդրոպոլը շատ անբարեկարգ և յետ մնացած մի տեղ է։ Կան փոքր ի շատէ տանելի հիւրանոցներ, բազմաթիւ կառքեր, փողոցները ուղիղ ու մաքուր են։ Մեծ ու գեղեցիկ շինութիւններ շատ չը կան։ Մինչև վերջին պատերազմը չէին թոյլ տալիս բարձր շինութիւններ կանգնեցնել, որովհետև Ալէքսանդրոպոլը բերդ էր, որ կարող էր ենթարկվել թշնամու ռմբակոծութեան։ Այժմ այդ արգելքը վերացել է, բայց շինողներ չը կան։ Ժողովուրդը, ինչպէս ասում են, «մեղք չունի»։ կալուածները արդիւնք չեն բերում, ուստի սիրտ չեն անում մեծ ծախսեր անել ու մեծ տներ շինել։

Իբրև գաւառական քաղաք, Ալէքսանդրոպոլը վատ չէ։ Բայց ի նկատի առնելով այն բացառիկ նպաստաւոր հանգամանքները, որոնց մէջ ապրել է նա մինչև այսօր, պէտք է խոստովանել որ եղածը շատ չէ։ Նկատելի է ժողովրդի հիմնական յատկութեան ծանր կնիքը։ Այդ ժողովուրդը իր աւանդական կարգերն է պաշտել և մնայել է անշարժութեան մէջ։ Նրա տները, ապրուստը վկայում են նահապետական սովորութիւնների մասին։ Այսպէս կարելի է դատել ոչ թէ մասնաւոր երևոյթների, այլ ընդհանրութեան տեսակէտից։ Ընդհանրապէս ժողովուրդը աղքատ է։ Դա գլխաւորապէս արհեստաւորների քաղաք է. կայ գիւղացիների թաղ, որ ունի իր սեփական աղքատիկ եկեղեցին, որ «գիւղացոց եկեղեցի» է կոչվում։ Գիւղացի են նրանք այն պատճառով, որ ապրելով քաղաքում, պարապում են երկրագործութեամբ։ Թիւրքահայ ժողովուրդը աշխոյժ չէ, խիզախ, արկածասէր բնաւորութիւն չունի, համարձակ ձեռնարկութիւններ չէ սիրում։ Ալէքսանդրոպոլից վերադառնալիս ես վազում հանդիպեցի մի շուշեցու, որ գալիս էր Գարակոստանից և պատմում էր իր առևտրական ճանապարհորդութիւնը Զինաստանում, Եապոնիայում, Աւղանիստանում։ Ալէքսանդրոպոլցին այսպէս չէ։ Նա զգոյշ է, պապենական ճանապարհով է գնում։ Բաղուի նաւթային արդիւնագործութեան մէջ կարծեմ միայն մի հատ ալէքսանդրոպոլցի է խառնվել, նա էլ սատիկ մնալով է, սարսափ տարածելով իր հայրենակից դրամատէրերի մէջ։

Այսպիսի մի ժողովրդից շատ դժուար է թռիչքներ սպասել։ Նա կենտրոնացած, ամփոփված է սեփական աշխարհի մէջ։ Իսկ սեփական աշխարհը արդէն շատ ու շատ քիչ է տալիս։ Ես լսում էի շատ գանգատներ։ Առևտուրն է միակ աչքի ընկնող պարապմունքը, նա էլ գնալով նուազում է։ Ժողովուրդը իրան ապահովելու միջոցներ չունի։ Նոյն իսկ երկաթուղին շատ էլ չէ ուրախացնում առ այժմ։ Մի պարոն ինձ ասում էր, որ երբ տեղացի տիկինը կամենում է վերջին մոդայի գլխարկ գնել, նա չէ մտնում Ալէքսանդրոպոլի մագազինները, այլ երկաթուղի է նստում և սլանում Թիֆլիս։ Անշուշտ սա չափազանցութիւն է։ Բայց այդ պատմուածքի մէջ կայ այն իրողութիւնը, որ հեշտ հաղորդակցութիւնը հնարաւորութիւն է տալիս մանր վաճառողներին այլ ևս չը դիմել իրանց քաղաքի խոշոր միջնորդներին, այլ ապրանք ձեռք բերել անմիջապէս Թիֆլիսից կամ աւելի հեռու տեղերից։

Մի խօսքով, տեղական պահանջների նեղ շրջանում ամփոփված ալէքսանդրոպոլցին այլ ևս բաւարարութիւն չէ գտնում։ Կամաց-կամաց նա զգում է, որ պէտք է դուրս գալ այդ դրութիւնից, բայց թէ ուր դուրս գալ և ինչպէս, այդ դեռ բոլորովին պարզ չէ։ Վերջին պատերազմից յետոյ մեծ թիւով ալէքսանդրոպոլցիներ գաղթեցին Կարս։ Սակայն տնտեսական-առևտրական տեսակէտից Կարսն էլ նոյնն է, ինչ Ալէքսանդրոպոլը։ տնտեսական խոշոր հանգամանքը երկու քաղաքների համար մինչև այսօր էլ շարունակում է մնալ այն, որ մեծ քանակութեամբ զօրք կայ երկու տեղն էլ։ Առևտրի գլխաւոր շարժիչը դա է։

Սակայն Ալէքսանդրոպոլը 70 տարիների փորձով պէտք է համոզված լինէր, որ այդ հանգամանքը չէ կարող մի ամբողջ ժողովրդի միակ յոյսը դառնալ։ Մի հասարակութիւն չը պիտի իդէալ դարձնէ «մի կերպ եօլա տանելը», ապրուստ պահպանելը, այլ պիտի ձգտումներ ունենայ աւելի բարձր տնտեսական-կուլտուրական առաջադիմութեան համար։ Դրա համար պէտք է թողնել պապերի ճանապարհը, առաջ քաշել հասարակական ինքնագործունէութիւնը, որ կարող է և պիտի ստեղծէ բարօրութեան աւելի տևական, աւելի ընդհանուր ասպարէզ։ Հաւաքական ինքնագործութիւնը կարող է հրաշքներ գործել նոյն իսկ այն անբարեբաստ հանգամանքների մէջ, որոնցով շրջապատված է Շիրակի մայրաքաղաքը։ Դրա ամենալաւ ապացոյցը քաղաքային ինքնավարութիւնն է։

(Կը շարունակվի)

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

—

Երբ մի որ և է սոցիալական պահանջ խոր արմատներ է գցում և պատմական անհրաժեշտութիւն դառնում, երբ նրա շարժառիթ պատճառները ժամանակի ընթացքում աւելի ու աւելի ուժեղ կերպարանք են ստանում, այն ժամանակ այլ ևս չէ կարելի այդ պահանջը արհեստական ճանապարհով, պալլիատիվ միջոցներով խեղդել, ոչնչացնել։

Ահա մի այդ տեսակ պահանջ է մակեդոնական հարցի հիմքը կազմում։ Նոր չէ այդ պահանջը։ Նա գոյութիւն է ստացել այն օրից, երբ ռուսաց ազատարար զօրքի յաղթութեան շնորհիւ Բուլգարիան թօթափեց իր վրայից թիւրքական լուծը և անկախ կեանք ստացաւ, իսկ նրա վիրաւոր ու արիւնոտ անդամը—Մակեդոնիան բաժան մնաց նրանից՝ բռնակալ ու աւերիչ իշխանութեան տակ իր չարքաշ կեանքը չարունակելու համար։

Դրանից յետոյ երկար համբերեց Մակեդոնիան, շատ անգամ օգնութիւն աղերսեց Եւրոպայից, բայց երբ այդ բոլորն ապարդիւն մնաց, նա զէնքն ընտրեց իբրև փրկութեան ճանապարհ և իր սեփական ոյժի վրա դրեց միակ յոյսը։ Այդպիսով սկսվեց մի անհաւասար կռիւ, որը մերթ ընդհատվելով, մերթ աւելի ուժեղ թափով բռնկվելով, տարիների ընթացքում աւելի ու աւելի սուր կերպարանք ստացաւ և ներկայ տագնապալի դրութիւնն ստեղծեց։

Մակեդոնացին երկար տարիներ կեանքի ու գոյքի ապահովութիւն խնդրեց, բայց փոխարէնը բռնակալական հալածանքների ենթարկվեց։ Նա փորձեր արեց իր պատիւն ու քրտինքի արդիւնքը պաշտպանելու, բայց Թիւրքիան արիւնով ցողեց մարդաչատ վայրերը։

Վերջապէս դադարեց այդ ողբերգական խաղը և նրա դերակատարները հանդիսատուին իրանց բազուկներին։ Արիւնաքամ Մակեդոնիան նստեց իր տաճնեակ հազարաւոր զաւակների կորուստը ողբալու, Թիւրքիան յետ քաշեց իր զօրքը, փոթորիկն անցած համարելով, իսկ Եւրոպան սպասողական դիրք ընդունեց, որ տեսնի իր «ազիլիւլների» արդիւնքը—բարենորոգումների իրագործումը։ Սակայն երկար չը տեսեց այդպիսի դրութիւնը։ Պատմական անհրաժեշտութիւն դարձած պահանջը նորից դրեց իր veto-ն, նորից ասպարէզ քաշեց մակեդոնական հրոսակախմբերին և այդպիսով անհանգստացնող հովեր ուղարկելով Բոսֆորի ափերին, խանգարեց Յլդըզի յաղթական հրճուանքը։ Վերջին հեռագիրները այդ փոփոխութեան առաջին նշաններն են արձանագրում։

—Մակեդոնական ապստամբութիւնը նորից բռնկվեց, ասում են դրանք, սուլթանը մեծ զօրք ուղարկեց Մոնաստիրի վիլայէթը, հրոսակախմբերն հետզհետէ աւելանում են Մոնաստիրի, Ուսկիւբի և Սալոնիկի վիլայէթներում։ Ազգաբնակութիւնը դրգռված է...

Ինչով բացատրել այդ անապատելի երևոյթը։ Ինչպէս յայտնի է ամիսներ առաջ Թիւրքական զօրքը երկիրը խաղաղացնելու պատրուակով աւերակ դարձրեց ամբողջ Մակեդոնիան։ Մակեդոնացիներին կոտորեցին, բանտ դրին, աքսոր ուղարկեցին, կախաղան բարձրացրին, այդ, այդ դեռ բոլորովին պարզ չէ։ Վերջին պատերազմից յետոյ մեծ թիւով ալէքսանդրոպոլցիներ գաղթեցին Կարս։ Սակայն տնտեսական-առևտրական տեսակէտից Կարսն էլ նոյնն է, ինչ Ալէքսանդրոպոլը։ տնտեսական խոշոր հանգամանքը երկու քաղաքների համար մինչև այսօր էլ շարունակում է մնալ այն, որ մեծ քանակութեամբ զօրք կայ երկու տեղն էլ։ Առևտրի գլխաւոր շարժիչը դա է։

Սակայն Ալէքսանդրոպոլը 70 տարիների փորձով պէտք է համոզված լինէր, որ այդ հանգամանքը չէ կարող մի ամբողջ ժողովրդի միակ յոյսը դառնալ։ Մի հասարակութիւն չը պիտի իդէալ դարձնէ «մի կերպ եօլա տանելը», ապրուստ պահպանելը, այլ պիտի ձգտումներ ունենայ աւելի բարձր տնտեսական-կուլտուրական առաջադիմութեան համար։ Դրա համար պէտք է թողնել պապերի ճանապարհը, առաջ քաշել հասարակական ինքնագործունէութիւնը, որ կարող է և պիտի ստեղծէ բարօրութեան աւելի տևական, աւելի ընդհանուր ասպարէզ։ Հաւաքական ինքնագործութիւնը կարող է հրաշքներ գործել նոյն իսկ այն անբարեբաստ հանգամանքների մէջ, որոնցով շրջապատված է Շիրակի մայրաքաղաքը։ Դրա ամենալաւ ապացոյցը քաղաքային ինքնավարութիւնն է։

(Կը շարունակվի)

գաղթականութեան հոսանքի մէջ գցեցին, բայց և այնպէս այժմ նրանց բողոքող ոյժը նորից ապառնական ձևով ասպարէզ է եկել։ Ուշագրաւ է այդ փաստը, բայց պատճառը հասկանալի։ Մակեդոնացիները երկար տարիների փորձով համոզվել են, որ խոստացված բարենորոգումները երբէք իրագործվելու չեն։ Նրանց ներկայ վիճակն այնքան դառը, այնքան անտանելի է, որ դրանից վատը երևակայել անգամ չէ կարելի։ Ընդհանուր խլրտումի ժամանակ հայրը իր որդուն էր կորցրել, որդին—հօրը, կինը—ամուսնուն, քոյրը—եղբօրը և այդպիսով կենդանի մնացած բոլոր մակեդոնացիների սրտում ամրացած մնացել էր վրիժառութեան կայծը, որ Բայրընի ասելով վերբեմն ազգերի գոյութեան յենարան է ստեղծում և հերոսութեան ճանապարհ բաց անում...

Ահա այդ կայծն է, որ այժմ տարերի բարձունքից, ձորերի խորշերից ներքև է քաշել մակեդոնական խմբերին և ապառնում է ապստամբութեան նոր հրդեհ առաջացնել ամբողջ երկրում։

Ուշադրութեան արժանին այն է, որ չը նայելով թիւրք կառավարութեան ձեռք առած նախազգուշութիւններին և կատարած անվերջ խուզարկութիւններին, մակեդոնացիների զէնքերը հետզհետէ ոչ թէ պակասում են, այլ աւելանում։ Այդ գաղտնիքը բաւական ճիշդ կերպով պարզում է ռուսաց «Новое Время» թերթի Թղթակիցը Մակեդոնիայից։

—«Ապստամբութեան գլխաւոր կենտրոնում Մոնաստիրի վիլայէթում, ասում է նա, մակեդոնացիներն ունեն 20,000 հրացան—Գրա սիստեմի և մօտ 4000—Մանլիխերի, Մաուզէրի և ուրիշ սիստեմի։ Առաջին տեսակը յուսնական հրացաններ են, որ վերջին թիւրքյունական պատերազմից յետոյ կառավարութիւնն ընծայել է մահմեդական ազգաբնակութեան, իսկ նրանցից գնել են մակեդոնացիները։ Միւս տեսակի հրացանները մակեդոնացիները գնում են թիւրք զինուորներից ու օֆիցէրներից։ Թիւրքական մագազինկան գընվում է 4 լիրայի, այսինքն 34 ռուբլու... թիւրք զինուորները ծախում են ապստամբներին և վառօդ և փամփուշտ։ Զինուորական իշխանութիւնը կորցրած իւրաքանչիւր փամփուշտի համար իբրև տուգանք զինուորի ռոճիկից յետ է դնում 30 փարա (մօտ 6 կոպ.), բայց որովհետև զինուորները իրանց իշխանութիւնից ամբողջ ամիսներով ու տարիներով փող չեն ստանում, ուստի ուրախութեամբ ծախում են փամփուշտները էժան գնով, թողնելով որ իշխանութիւնը չը վճարած ռոճիկից յետ դնէ դրա արժէք—տուգանքը։ Այդպիսով ապստամբները երբէք ռազմական պաշարեղէնի պակասութիւն չեն քաշում։ Ինձ ցոյց տուին ջորիների մի ամբողջ քարաւան, որ նաւթի երկաթէ արկղներով այդպիսի նիւթեր էր տանում հրոսակախմբերի համար։ Քարաւանի պահապան ուղեկիցները թիւրք զինուորներ էին, որոնք ի հարկէ ստանալու էին իրանց առատ վարձատրութիւնը»...

Ահա այդպիսով թիւրք զինուորները սուլթանական հրամանին ենթարկվելով գնում են Մակեդոնիա, աւերում են, կոտորում են, բայց մի և նոյն ժամանակ նիւթական կարիքից դրդված հրացան, փամփուշտ ու վառօտ են ծախում ապստամբներին, այդպիսով միջոց տալով նրանց ուժեղ կռիւ մղելու նոյն սուլթանի բռնակալ կառավարութեան դէմ։

Միամտութիւն կը լինի, ի հարկէ, եթէ ենթադրենք, թէ մակեդոնական այս նոր շարժումը դրական մի մեծ հետևանք կունենայ։ Գուցէ իրանք մակեդոնացիներն էլ գիտեն այդ, բայց շարունակում են բողոքող շարժումը, որովհետև այդպէս է թելադրում իրերի ընթացքը, այդ է ասում պատմական անհրաժեշտութիւնը։

Թող Ելդզը ջանքեր չուայէ խաղաղութիւն հաստատելու համար, թող սուլթան Համիդը Բոսֆորի ափերից Եւրոպային քնքոյշ լուրեր ուղարկէ իր բարենորոգչական ձգտումների մասին,—այդ բոլորն էլ առանց հետևանքի կը մնայ, քանի որ սոցիալական—տնտեսական ամուր հիմքերի վրա հաստատված մակեդոնական պահանջը բաւարարութիւն չէ ստացել, քանի որ պատմական անհրաժեշտութիւնն իր գոյութիւնը չէ ընդհատել։ Կայ այդ անհրաժեշտութիւնը—կը լինեն և զոհեր և հերոսներ։

Ե. Թ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Սոֆիայից հաղորդում են «Rappel» լրագրին, թէ լուրերը իշխան Ֆերդինանդի դէմ կազմված դաւադրութեան մասին, չը նայելով պաշտօնական հերքումներին, շարունակում են յամառութեամբ պտտել Բոլգարիայում։ Նրանց տարածմանը աստիճ նպաստեցին այն չարագուշակ նշանները, որոնք նկատվում են այժմ բոլգարական զօրքի մէջ։ Մեծ յուզմունք է տիրում այժմ բոլգարական օֆիցէրների շրջանում. և ահա թէ ինչու. այն ժամանակ, երբ յեղափոխականների առաջին հրոսակները երևացին Մակեդոնիայում, բոլգարական շատ օֆիցէրներ արձակուրդ ստացան կառավարութիւնից, որպէս զի հնարաւորութիւն ունենան ուղևորվելու Մակեդոնիա և կռուելու թիւրքերի դէմ Սարաֆովի կազմակերպած զօրաբաժինների հետ միասին։ Մի քանի ամիս յետոյ, երբ յեղափոխական գործունէութիւնը Մակեդոնիայում փոքր ինչ թուլացաւ, յիշված օֆիցէրները վերադարձան Բոլգարիա, բայց զինուորական մինիստրը հրաժարվեց ընդունել նրանց և վերադարձնել այն պաշտօնները, որ առաջ նրանք ունէին։ Բոլգարական օֆիցէրների բոլոր շրջանները չափազանց զայրացած են այս մերժումից։ Երկիւղ են կրում, որ այս զայրոյթը կարող է շարժառիթ լինել այնպիսի գործողութիւնների, որոնք ուղղված կը լինեն իշխան Ֆերդինանդի և նրա կառավարութեան դէմ։

—Բ. Դուռը վերջապէս թոյլ տուեց բանալ Մակեդոնիայում բոլգարական այն դպրոցները, որոնք փակված էին ապստամբական շարժումների հէնց սկզբում, բայց ինչպէս հաղորդում է «Correspondenz Internationale» լրագիրը, բոլորովին անսպասելի պայմաններ առաջարկեց, ինչպէս, օրինակ, այն, որ ուսուցիչները առձեռն դրամով գրաւականներ ներկայացնեն կառավարութեան, որ այսուհետև ամենևին չեն զբաղվելու քաղաքական հարցերով։

—Թիւրքիայի ծովային նախկին մինիստր Հասան-փաշայի մահվանից յետոյ, որ մի հաղուագիւտ ճարպիկ կաշառակեր անձն էր և որ միլիոնաւոր կարողութիւն դիզելով նոր նաւերի շինութեան և հները կարկատելու կապալների մէջ, կատարեալ անկման աստիճանի հասցրեց թիւրքական նաւատորմը, նոր մինիստր նշանակվեց Զէկալ բէյ։ Արտասահմանեան լրագիրների ասելով, նոր մինիստրը մի բոլորովին անկաշառ մարդ է և լաւ կրթված։ Նա աւարտել է իր ուսումը Լիոնի համալսարանում և խօսում է եւրոպական մի քանի լեզուներով։ Սուլթան Արդիւլ-Համիդ էֆենդ առաջին ունկնդրութեան ժամանակ հանձնարարեց նոր մինիստրին, որ ապատում է նրանից հիմնական ըէֆորմներ թիւրքական նաւատորմի մէջ։

—Էֆենդ նոյն զօրքը, որը պետական յեղափոխութիւն կատարեց՝ Պեսար Կարագէորգիեվիչին գահ բարձրացնելու համար, սկսում է արդէն դժուարութիւններ յայտնել նրա դէմ։ «Temps» լրագրի Բէլգրադից ստացած տեղեկութիւնների համեմատ, դժգոհութիւնը օֆիցէրների մէջ գնալով աճում է և սուր ընդունութիւն է ստանում։ Դաւադրութեան մասնակցողները գտնում են, որ իրանք առատ կերպով չը վարձատրվեցին իրանց մատուցած ծառայութեան համար։ Իսկ նախկին թագաւորի սիրած օֆիցէրները այժմ անտես են անվում, չը նայելով, որ նրանք իրանց կրթութեամբ բարձր են և համարեա բոլորն էլ աւարտել են զինուորական ակադէմիան։ Բնորոշ է, որ շատ մայրաքաղաքներում տերբիական օֆիցէրները, զինուորական գործակալները բոյկոտի են ենթարկվում օտարազգի օֆիցէրների կողմից. նրանցից երես են դարձնում, մինիստրութիւններում նրանց չեն ընդունում, երբ նրանք գալիս են համազգեստով, իսկ գունդերում նրանց ձեռք չեն մեկնում։ Աննախանձելի դրութիւն։

—«Gil Blas» լրագրի աշխատակիցը տեսակցութիւն ունեցաւ Ֆրանսիական հանրապետութեան նախագահի անձնական քարտուղար Աբէլ Կոմբարիէի հետ, ցանկանալով իմանալ, թէ արդեօք Էմիլ Լուբէն, իր նախագահութեան եօթնամեայ ժամանակը լրացնելուց յետոյ, դիտաւորութիւն ունի կրկին իր թեկնածութիւնը դնելու։ Կոմբարիէի խօսքով, նախագահը չի դնի իր թեկնածութիւնը և, պետական օրէնքներով որոշված եօթնամեայ ժամանակամիջոցը լրացնելուց յետոյ կը վերադառնայ դէպի հասարակ քաղաքացու մասնաւոր կեանքը։ Լուբէի կարծիքով, եօթ տարով ընտրված նախագահը պէտք է եօթ տարի էլ նախագահութիւն անէ։ Նա պարտաւոր է ինքն և իր սեփական դրդմամբ հրաժարվել իր թեկնածութիւնից հէնց այն պատճառով, որ նրա համար շատ հեշտ կը լինէր օգուտ քաղել իր բարձր դիրքից՝ կրկին ընտրվելու համար։

—«Times» լրագրին Բուխարէստից հաղորդում են, որ այն ճնշումը, որի տակ ստիպված են ապրել ռումինական հրէաները, անգործութիւնը և աղքատութիւնը իրանց գործն անում են։ Հրէաների գաղթը դէպի Ամերիկա ընդարձակ չափեր է ընդունում։ Հրէական բարեգործական ընկերութիւնները Միացեալ-Նահանգներում նպաստում են այդ շարժմանը և ամեն տեսակ օգնութիւն են հատցնում գաղթականներին։

—Վերջին ժամանակներս Բէլգրադում անդադար այցելում են Ալէքսանդր թագաւորի և Դրագա թագուհու գերեզմանները ոչ միայն սերբերը, այլ մանաւանդ Սերբիա եկող օտարազգիները։ Սերբական կառավարութիւնը այդ պատճառով անյարմար է համարում արքայական զոյգի նշխարները Բէլգրադում պահել և մտադրութիւն ունի տեղափոխել նրանց Ռակոպիզի վանքը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 յուլիսի

Կ. ՊՕԼԻՍ։ Մակեդոնական կոմիտէները նախագծել էին շարժումը սկսել օգոստոսի 2-ին, ս. Սանփանոսի տօնի օրը, բայց հարկ եղաւ սկսելու նշան տալ անցեալ կիրակի։ Մօնաստիրից ստացված հեռագիրները, որոնք միայն երէկ ստացվեցին հեռագրաթելերը կտրված լինելու պատճառով, հետևեալ լրացուցիչ տեղեկութիւններն են պարունակում. «Ապստամբական հրոսակախմբերը Ռէսնայի մօտակայքում յարձակվեցին մի քանի գիւղերի վրա. վեց տեղում հրոսակախմբերը կռուեցին զօրքերի հետ, իսկ մի քանի տեղերում մահմեդական ազգաբնակութեան հետ։ Հրոսակախմբերի նոր եկած առաջնորդների մէջ են գնդապետ Եանկօվը և Սարաֆովը։ Մօնաստիրի վիլայէթում, Մօնաստիրում և շրջակայքում գրրգռված տրամադրութիւն է տիրում։ Առևտուրը և հաղորդակցութիւնը դադարել է։ Մօնաստիրի վալին պահանջեց մի դիվիզիա զօրք. մի բրիգադա և ութը բատալիոն արդէն ճանապարհ են ընկել։ Սուլէյման փաշային յանձնված է հրոսակախմբերի անկարգութիւնները ճնշելու համար նշանակված զօրքի ղեկավարութիւնը։ Կեչանի, Կրատօվի և Էնդրէ Պալանկի շրջակայքում յայտնվել են մեծ հրոսակախմբեր։ Ուսկիւբի պահեստազօրքը ուժեղացրած է։ Հիլմի փաշան ընդհատեց իր ճանապարհորդութիւնը և վերադարձաւ Ուսկիւբ։

ՍՕՖԻԱ։ Հաստատ է, որ ապստամբութիւնը տարածվել է Բիտոլիի և մասամբ Ուսկիւբի ու Սալոնիկի վիլայէթներում։ Բազմաթիւ հրոսակախմբեր, Գրայի հրացաններով զինված, աւերեցին թիւրքական գիւղեր, զօրանոցներ, կայարանների շինութիւններ և կամուրջներ։ Զօրքերի պատահելիս հրոսակախմբերը թագնվում են լեռներում։ Կրատօվի շրջակայքում յայտնվեցին մի քանի հրոսակախմբեր, որոնց միացաւ տեղական ազգաբնակութիւնը։ Թիւրք կառավարութիւնը հաւատացնում է, որ նա թոյլ չի տայ գաղտնութիւններ։ Բոլգարական կառավարութիւնը մեծ հետաքրքրութեամբ, բայց բոլորովին հանդարտ կերպով, հետևում է դէպքերին, յոյս ունենալով, որ Բ. Դուռը այն կատաստրոֆի առաջը կառնի, որ կարող էր իշխանութեանը վտանգաւոր ձեռնարկութեան մէջ գցել։ Զինուորական մինիստրը խիստ հրամաններ ուղարկեց սահմանի պահականոցներին, որպէս զի նրանք արգելեն թիւրքական զինված խմբերին բոլգարական սահմանն անցնել։

ՍՕՖԻԱ։ Պետական շրջաններում յայտնում են, որ կառավարութիւնը բոլորովին չէր ապասում ապստամբական շարժման վերսկսվելը և համարում է այդ շարժումը տեղական և ոչ ընդհանուր։

ՍԱԼՕՆԻԿԻ։ Մօնաստիրի վիլայէթում ընդհանուր ապստամբութիւն է։ Ապստամբները այրում են տները, որտեղ հաւաքած են նոր հացահատիկները։ Կրուչեվում դինամիտային փորձ կատարվեց. սպանված են 30 ատիճանաւորներ և թիւրք ընտանիքներ։ Սալոնիկում հանդարտ է։

ԲԵԼԳՐԱԴ։ Սերբական զօրքի ապայ Պաւել Միխայլովիչը մատնեց աւստրիական միսսիային մոբիլիզացիայի նախագիծը։

ՊԱՐԻԶ։ Երդուեալների դատարանում սկսվեց էմբերների գործի քննութիւնը։

27 յուլիսի

Կ. ՊՕԼԻՍ։ Ելդզը-Կէօսկը և Բ. Դուռը, որ չափազանց անհանգստացել էին ապստամբական հրոսակախմբերի երևալու մասին առաջին լուրերն ստանալով, այժմ կամաց-կամաց հանգստանում են։ Շարժումը սահմանափակված է Մօնաստիրի վիլայէթում։ Բ. Դուռը պնդում է, որ ռեդիֆների ենթադրական արձակումը և նրանց փոխարինումը Ռուդչի փաշայի զօրքերով կիրագործվի, չը նայելով վերջին օրերի դէպքերին։ Թիւրքական տեղեկութիւնների համեմատ հարիւր հոգուց բաղկացած մի հրոսակախումբ անկարգութիւններ է անում Վոդէնի լեռներում և հրդեհեց մի քանի մահմեդական տներ և հացահատիկների պահեստներ։ Դերբայի շրջակայքում գտնվում է 200 հոգուց բաղկացած մի հրոսակախումբ։ Սիրեսում ձերբակալված է մի բոլգար, որ ուզում էր դինամիտի ռումբեր անցկացնել։ Բ. Դուռը գրաւոր պատասխանեց Ռուսաստանի արած հարցումին՝ Էրզրումի և Բիթլիսի վիլայէթներում հայերի դէմ քիւրդերի կողմից սպառնացող վտանգի մասին. նա հերքում է վտանգը։ Վերջին օրերում Ելդզի արքունիքում մինիստրների զինուորական խորհրդակցութիւն տեղի ունեցաւ մակեդոնական վիլայէթների գործերի դրութեան մասին։

ՍՕՖԻԱ։ Լաւ աղբիւրից տեղեկ մակեդոնական շրջանները հաղորդում են, որ ապստամբութիւնը շուտով տարածվելու է Ուսկիւբի ամբողջ վիլայէթում։ Թիւրքերը հալածանքի են ենթարկվում հրոսակախմբերի կողմից և կորցրին մեծ քանակութեամբ մարդիկ։ Գրայի հրացաններով զինված հրոսակախմբերը և կացիններով զինված գիւղացիները կռւում էին հերոսաբար։ Ապստամբների մեծ խմբեր կենտրոնացած են Կօմանօվի և Կրատօվի միջև. նրանք բռնել են Բեռնայի, Օխրիդայի և Բեռալիայի միջի կիրճը։

ՎԻԵՆՆԱ։ Կայսրը հեռանում է Իշլայից և գալիս է Վիէննա, որպէս զի ունգարական քաղաքական գործիչներին խորհրդակցութեան հրաւիրէ ունգարական կրիզիսի առիթով։

ԲՈՒԴԱՊԵՇՏ։ Տեղի ունեցաւ մինիստրների խորհրդակցութիւն մինիստր նախագահի ունկնդրութեան մասին, որ ունեցել էր կայսրի մօտ, Իշլայում։ Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ Կոնտ Հեդերվարիի ներկայացրած գործունէութեան ծրագրով չը պարզվեց գործերի դրութիւնը և որովհետև Կօշուտի կուսակցութեան մի մասը յայտնել է, որ իրա համար պարտաւորական չէ համարում նախկին համաձայնութիւնը, ուստի մինիստրների խորհուրդը որոշեց հրաժարական տալ։

28 յուլիսի

ՀՌՕՄ։ Առաւօտեան ս. Պետրոսի տաճարում կայացաւ պապի հանդիսաւոր թագադրութիւնը. ներկայ էին մօտ 50,000 մարդիկ։

ԲԵԼԳՐԱԴ։ Թիւրքական մի զինուոր սպանեց Բիտոլիայի ռուսաց հիւպատոս Բոսակովսկուն։ Բոսակովսկու մահը մեծ յուզմունք առաջ բերեց բոլորի կողմից։ Հիւպատոսը ամառն անց էր կացնում Բիտոլիայի մօտի Բուկովօ վանքում, որտեղից իւրաքանչիւր օր գալիս էր հիւպատոսարան։ Քաղաքի մուտքի մօտ զետեղված է թնդանօթաձիգների զօրանոց։ Այդտեղից անցնելիս հիւպատոսը նկատում է, որ թուրք պահապան զինուորը ապառնական հայեացքով է նայում նրա վրա և պատուոյ նշան ցոյց չէ տալիս։ Հիւպատոսը մօտենում է զինուորին, որպէս զի հարցնէ, բայց այդ ժամանակ պահապանը երեք անգամ արձակում է հրացանը։ Հիւպատոսը մեռած գետին է ընկնում։

Կ. ՊՕԼԻՍ։ Բ. Դուռը տեղեկութիւն է ստացել, որ ապստամբները այրել են հինգ գիւղ, որոնց բնակիչները՝ մահմեդականներ և յոյներ, լուրերի համեմատ, սպանված են։ Բ. Դուռը բողոքող յայտագրով դիմեց մեծ պետութիւններին։ Մարշալ Օմէր Բուշդի-փաշան ճանապարհ ընկաւ Գրիզրէնիդ դէպի Մօնաստիր, որպէս զի ստանձնէ այն զօրքերի ղեկավարութիւնը, որոնք կենտրոնացած են այդ վիլայէթի հրոսակախմբերի անկարգութիւնները ճընշելու համար։

ԲԵԼԳՐԱԴ։ Յուլիսի 27-ին գիշերը ջարդեցին թիւրքական միսսիայի լուսամուտների ապակիները։ Ցանցաւոր Միլենկովիչը ձերբակալված է։ Դէպքը հետևանք է այն ընդհանուր զայրոյթի, որ առաջացել է Բոսակովսկու սպանութեան պատճառով։

ՍԱԼՕՆԻԿԻ։ Թիւրքական շղթաները պաշարում են Բիտոլիան։ Քաղաքի խանութները փակված են։ Երկաթուղու բանուորները հրոսակների կողմից արված մահվան սպառնալիքից դրդված հրաժարվում են երկաթուղու գիծը սարքելուց։ Վտանգի պատճառով զանազան կողմերից պահանջում են, որ Մակեդոնիայում երկաթուղու մարդատար գնացքների երթևեկութիւնը դադարեցնվի։

ՄԱՐՍԕԼ։ Այն բոպէին երբ մինիստր-նախագահը մտնում էր քաղաքային տունը, ձրկնորսի շորեր հագած մի մարդ ատրճանակ արձակեց նրա կառքի ուղղութեամբ։ Կօմբի վրա ատրճանակ արձակողը իտալացի է՝ Գիկօլօ անունով։ Ոչ ոք վիրաւորված չէ։ Գիկօլօն ձերբակալված է։ Պաշտօնական տեղեկութիւնների համեմատ Կօմբի կառքի վրա գցեցին ռումատ (պատրիճան), որ դիպաւ կառքի նստարանի վրա նստած տուրհանդակին։ Գործակալներն ընկան յանցաւորի ետևից, որին պաշտպանել էին աշխատում ընկերները։ Դրանցից մէկը, Գիկօլօ անունով, մինիստրական կառքից մօտաւորապէս 100 մետր հեռու գտնվելով, երկու անգամ ատրճանակ արձակեց։ Պադրիջան գցող մարդը և Գիկօլօն ձերբակալված են։ Վերջինը արբած էր և բացատրում է ատրճանակ արձակելը։ Ամբոխը ուզում էր ծեծել Գիկօլօին, բայց ոստիկանութիւնը դժուարութեամբ կարողացաւ

հացնել նրան ոստիկանատուն։ Նա 21 տարեկան է։ Պաղրիշան գցողը նոյնպէս իտալացի, 19 տարեկան, Դակիմօ Սագօսաիօ անունով։

ՍՕՖԻԱ։ Բօստօվսկու սպանութիւնը այստեղ չափազանց մեծ ազդեցութիւն գործեց։ Մակեդոնական չրջանները տեղեկութիւն են ստացել, որ իսկական ճակատամարտից յետոյ ապստամբները բացի Կրուշեվից գրաւել են Բեանու։ Իշխան Ֆերդինանդին սպասում են օգոստոսի 2-ին։

Կ. ՊՕԼԻՍ։ Սալօնիկից ստացված տեղեկութիւնների համեմատ հրամայված է մօբիլիզացիայի ենթարկել բեդիֆների 24 բատալիօն։ Մօնաստիրի վիլայէթում մի քանի առանձին դէպքերում գիւղական ազգաբնակութիւնը միանում էր հրոսակախմբերի հետ. միւս կողմից մահմեդականներն էլ կազմել են իրանց հրոսակախմբերը, որոնք մակեդոնական հրոսակախմբերի հետ ընդհարումներ են ունեցել և մեծ կորուստներ տուել։

ԻՇԼ։ Ժամանեց բուլգարական թագաւորը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Правительственный Вѣстникъ»-ում տպագրված են. 1) Կ. Պօլսի ռուսաց դեսպանի հեռագիրը, 2) Բիտօլիայի հիւպատոսարանի կառավարչի հեռագիրը Բօստօվսկու սպանութեան մասին Խալիմ ժանդարմի ձեռքով և այն մասին, թէ հիւպատոսի կառապանի վրա յետոյ գնդակ են արձակել քաղաքում և 3) արտաքին գործերի մինիստրի հետեւեալ հեռագիրը Կ. Պօլսի դեսպանի անունով, յուլիսի 27-ից. «Թագաւոր Կայսրը սուլթանից հեռագիր ստացաւ, որով խորին ցաւակցութիւն է յայտնում Բիտօլիայի ռուսաց հիւպատոսի մահվան առիթով։ Միաժամանակ ներկայացրի Բարձրագոյն հայեցողութեան ձեզանից ստացած հեռագիրը Բօստօվսկու վերջացուցիչ սպանութեան մասին և Թագաւոր Կայսրը բարեհաճեց հրամայել, որպէս զի դուք, առանց ամենամանրակրկիտ մեծ վեզիրի տուած հաւատիացումներով ամենաեռանդուն պահանջներ յայտնէք Թիւրքը կառավարութեանը, որ լիովին բաւարարութիւն տայ և չուտափոյթ կերպով պատժի ենթարկէ թէ յանցաւորին և թէ բոլոր զինուորական ու քաղաքացիական անձերին, որոնց վրա է ընկնում կատարված յանցագործութեան պատասխանատուութիւնը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

ԿԱՐՍԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ'—Ստացանք փողը, բայց յայտարարութիւնը ոչ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԹԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴԷՈՍԻ ՑԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշվով, փակագծում Թիֆլիսի հաշվով)

Արագ գնացք Թիֆլիսից—Բաթում ամեն օր դուրս է գալիս առաւօտեան 9 ժ. 39 ր. (10 ժ. 37 ր.) հասնում է Բաթում երեկոյեան 8 ժ. 3 ր. (9 ժ.)։

Արագ գնացք Բաթումից—Թիֆլիս ամեն օր դուրս է գալիս երեկոյեան 10 ժ. 24 ր. (11 ժ. 22 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 8 ժ. 44 ր. (9 ժ. 42 ր.)։

Փոստատար գնացք Բագուից դուրս է գալիս երեկոյեան 9 ժ. 18 ր. (10 ժ. 16 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 4 ժ. 25 ր. (5 ժ. 23 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 5 ժ. 20 ր. (6 ժ. 18 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 6 ժ. 5 ր. (7 ժամ 3 րոպէին)։

Մարդատար գնացքը Բագուից դուրս է գալիս ցերեկվայ 1 ժ. 3 ր. (2 ժ. 1 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 5 ր. (7 ժ. 3 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 6 ժ. 51 ր. (7 ժ. 49 ր.), հասնում է Բաթում երեկոյեան 6 ժ. 58 ր. (7 ժ. 56 ր.)։

Փոստատար գնացքը Բաթումից դուրս է գալիս գիշերվայ 9 ժ. 23 ր. (10 ժ. 21 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվայ 10 ժ. 51 ր. (11 ժ. 49 ր.), հասնում է Բագու առաւօտեան 5 ժ. 8 ր. (6 ժ. 6 ր.)։

Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս առաւօտեան 9 ժ. 39 ր. (10 ժ. 37 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան 10 ժ. 3 ր. (11 ժ. 1 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 10 ժ. 34 ր. (11 ժ. 32 ր.), հասնում է Բագու ցերեկվայ 3 ժ. 2 ր. (4 ժ.)։

Փոստատար գնացքը դուրս է գալիս Թիֆլիսից դէպի Երևան երեկոյեան 11 ժ. 32 ր. (12 ժ. 30 ր.), հասնում է Երևան 5 ժ. 14 ր. (6 ժ. 12 ր.), հասնում է Կարս 2 ժ. (2 ժ. 58 ր.)։

Փոստատար գնացքը Կարսից դուրս է գալիս ցերեկվայ 3 ժ. 57 ր. (4 ժ. 55 ր.), հասնում է Ալէքսանդրոպոլ երեկոյեան 7 ժ. (7 ժ. 58 ր.), Երևանից դուրս է գալիս 11 ժ. 6 ր. (12 ժ. 4 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 5 ժ. 11 ր. (6 ժ. 9 րոպէին)։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ԴԱՒԱՄԱՐԴԵԱՆԻ

(կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
ԶԻԿՕՂԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մարթու, վներական և վիրաբուժութիւն։
Զ. Խ. ԲԱՐԵԱՆՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.
Ռ. Խ. ԳԶՍԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Գ. Ա. ԹԱՐԻԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. Ներքին և երեխայոց հ. երկուշ. չորեք. ուրբաթ։
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՈՅԵԱՆՑ—1—1½ ժ. Ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԿՈՅՆԵՐԸ

Ն. Ն. ՌՈՍՏՈՊՉԻԿՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. մարթու և վներական հ.
Լ. Վ. ԲՈՐՏՕԼԴ—6—7 ժ. Նեարդային (էլեկտրաբոյժ) ներքին և վներական հ.
ԿԻՆ-ԲԱՒԿԻ ՇԷՏԵՐԹԻՆԻՆ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ա. ԹԱՐԻԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—8—8½ ժ.

Գները 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (Լիկոնթիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ց. ԱՌՎԱՆՈՅՑԱԿԻ—ատամ. ծոպհատ և բժշկական մարթամարզ. գիտել 11—1 ժ.։

Հիանպանցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Սիմֆոնիքական և ընտանեկան երեկոյթների ժամանակ գինովցիներին արգելվում է մուտք գործել ժողովարան, իսկ մանկական երեկոյթների ժամանակ նրանք կարող են մտնել ժողովարան միայն իրանց ծնողների հետ միասին և մնալ այնտեղ մինչև ժամի 10-ը։ 1—3

ԳՐՊԱՆԻ ԷԼԷԿՏՐԱԿԱՆ ԼԱՄՊԱ «ԻՆԷՐԳԻԱ»

մինչև 7000 մոմի լուսաւորութեամբ։ Անհրաժեշտ առարկայ ամեն մի տան մէջ։ Գինը 1 ր. 50 կոպ.։ Պահեստի բատարէա—60 կոպ.։ Առևտրականներին զիջումն կը լինի։

Թիֆլիս—Կ. Բոբիլեվ
Ալէքսանդրեան այգու հանդէպ։

ԳԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ

Ա. հատոր

Մակար եպիս. Բարխուդարեանցի։ Գինն է ճանապարհածախսով մի բուբլի յիսուն կոպէկ. ցանկացողք կարող են դիմել հեղինակին ս. Էջմիածին իւր հասցէին։ Ապառիկ չը յղուիր։ 1—8

Ներսիսեան դպրոցն ապարտած մի երիտասարդ ուսուցչական պաշտօն է որոնում Պարսկաստանում։ Դիմել Одесса, К. Абіянцу. 2—4

Օգոստոսին Աստրախանում բացվելու է

ԳՐՔԵՐ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

գրավաճառանոց։ Դիմում ենք մեր հեղինակներին, թարգմանիչներին, ձեռնարկներ կազմողներին և հրատարակիչներին—ցանկացողները թող ուղարկեն իրանց աշխատութիւններն ու հրատարակութիւնները վաճառելու, յայտնելով իրանց պայմանները զեղչի մասին։

Հասցէն. Астрахань. „Товорищество книжной Торговли“, Московская ул. д. Ханъ. Багирова. 3—5

Լոյս տեսաւ և բաժանորդներին ուղարկվեց

ՐԱՖՖԻ

ՈՍԿԻ ԱՓԱՂԱՂԸ

Հեղինակի պատկերով, գինն է 1 ր., փաստակազմ 1 ր. 60 կ. ճանապարհածախս իւրաքանչիւր օրինակին 20 կոպէկ։ Պահեստը գտնվում է հրատարակչի՝ Թադէոս Ս. Բունիաթեանցի մօտ, Բագուում։ Նոյն տեղից կարելի է ստանալ նաև նոյն հեղինակի միւս աշխատութիւններից նրանք, որոնք չեն ապառված։ Կարելի է ստանալ նաև բոլոր հայ հեղինակների գրուածքները։

Մեր հասցէն՝ Баку, книжная торговля Татевоса А. Бунятянца. 9—10

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշվապահութեան ձեռնարկի», որ Ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ԳԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

Սրկու տեսի անձանց՝ գործնական ձևով հաշվապահութիւն 4½ ամսում։

ԳԱՐԱԳՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ. վաճառականական, բանկային, յանձնարարական, գործարանական, նաև. նաւթարդիւնաբերական և նաւթագործական հաշուապահութիւն։ 2) Առևտրական թուաբանութիւն։ 3) Առևտրական թղթակցութիւն։ 4) Մուրհակային և առևտրական օրէնքներ։ 5) Վայելչագրութիւն եւ ուղղումն ամենավատ ձեռագրի։ 6) Թուաբանութիւն համրիչի վրա։ 7) Գրելու վարժութիւն «Էմենկոտնի» գրելու մեքենայի վրա (կամաւոր)։

Կուրսերի համար դասատուներ են հրաւիրված համալսարանական կրթութիւնով և իրանց գործին մասնագէտ մարդիկ, որոնք հաստատվել են իրանց պաշտօնում Ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. գեղագրութեան համար ևս հրաւիրված է մի գեղագիր նկարիչ։

Ընդունելութիւն ամեն օր ժամը 5 մինչև 7 երեկ.։ Պարապմունքները սկսվում են 1903 թի սեպտեմբերի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ՝ 60 բուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը ուսանողներին տրվում են, Ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, առանձնատներ։

Ցանկացողներին խնդրում են դիմել դրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիս-ում, Н. В. Абраамяну, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։

Վերեւում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, տասնց զօսաի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։ (կ. ա. հ.) 5—25

Ֆինանսների Ministրությունից հաստատված

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

երկու սեռի անձանց համար

[Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова]

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առևտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են աստիճաններ։

Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն՝ առևտրական, արդիւնաբերական-գործարանական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամենայն օր, կուրսերում՝ առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа)—տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ Баку, Учредителю Коммерческихъ Курсовъ А. И. Теръ-Каспарову. (ե. չ.) 8—25

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ „ՆԱԳԷԺԴԱ“

ծովային, գետային եւ ցամաքային ապահովագրութեան, ապրանքների տեղափոխութեան եւ դոյքերը կրակից ապահովագրելու համար։

ՀԻՄՆՎԱԾ է 1847 ԹԻՒՆ

Հիմնական դրամագլուխը	1,650,000 բուբլի
Պահեստի դրամագլուխը	2,664,808 »

I. ԱԳՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

Աւելի քան 300 գործակալութիւններ ելրոպական Ռուսաստանի, Կովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի եւ հեռաւոր Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս եւ ներկայացուցիչներ արտասահմանի գլխաւոր քաղաքներում։

Տեղափոխութիւն ամեն տեսակ բեռների եւ իրերի, որոնց ընդունելութիւնը եւ յանձնումը կատարվում է թէ ամենը եւ թէ պահեստներում եւ խանութներում։

Ցանձնումն բեռների ուղարկիչների կողմից առաջարկված պայմաններով (վերադիր գներ ի հաշիւ ուղարկիչների, դրամի փոխադրութիւն (переводъ) բեռները յանձնելու տեղը հասցնելու համար եւ այլն)։

Պահպանութիւն բեռների արտօնեալ պայմաններով ապահովագրելով նրանց պահեստներում, որի համար չտա կէսերում կան ընդարձակ պահեստներ, յատկապէս բեռներ պահելու համար։

II. ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Սեփական մարդատար, ապրանքատար եւ ձգող շոգենաւեր, ծովային եւ գետային նաւեր (70 նաւ)։

Բեռնափոխ եւ մարդատար նաւերի պարբերական հաղորդակցութիւն Վոլգա գետի բոլոր նաւահանգիստների մէջ, Ռիբինսկից մինչեւ Աստրախան եւ Կասպից ծովի բոլոր նաւահանգիստների մէջ, Աստրախանից մինչեւ Պարսկաստանի ափերը։

Ամենաքնդարձակ պահեստներ Նիժնիում (տիրիրական նաւամատոյցի վրա), Աստրախանում, Բաքւում եւ Կրասնովոդսկում։

Բեռները անընդհատապէս ուղարկելու համար ընկերութեան շոգենաւաշինարանը համաձայնութիւն է կապել երկաթուղիների հետ։ Այն ապրանքների տեղափոխութեան համար, որոնք ուղարկվում են Ռուսաստանից Պարսկաստան եւ Պարսկաստանից Ռուսաստան, գոյութիւն ունի առանձին, բացառիկ արտօնութիւններով, հստակաշնութիւն Պարսկական ապահովագրական եւ տեղափոխութեան ընկերութեան հետ։

III. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԴՈՐԾԵՐ.

ա) Ապահովագրութիւն բեռների, որոնք տեղափոխվում են թէ ցամաքային և թէ ջրային հանապարհներով (ծովերով և գետերով)։
բ) Ապահովագրութիւն ամեն տեսակ դոյքերի։
գ) Ապահովագրութիւն ամեն տեսակ դժբաղդ դէպքերից հանապարհին ամեն տեսակ նաւերի, շոգենաւերի, առագաստանաւերի, վագոնների և վագոն-ցիստերնների։
դ) Ապահովագրութիւն քանդարդին իրերի և արժէքաւոր իղձերի, որոնք ուղարկվում են պօստով, ցամաքային և ծովային հանապարհներով, համաշխարհային պօստային դաշնակցութեան բոլոր կէսերի մէջ։
Ապահովագրութիւններ ընդունվում են ինչպէս վարչութեան, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան բոլոր գործակալութիւնների մէջ։
Բացի տեղափոխութեամբ զբաղվող գործակալութիւններից, կրակից ապահովագրելու գործերով մասնաւորապէս զբաղվում են էլի աւելի քան 350 գործակալութիւններ։
Ս. Պետերբուրգի «Նագեժդա» ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Ադմիրալտեյսկի պրոսպեկտի վրա, № 10-բարդ տանը։
Լիազօրներ—ծովային շոգենաւագնացութեան համար՝ Բաքւում, գետային շոգենաւագնացութեան համար՝ Նիժնի-Նովգորոդում։
Տիֆլիսի գործակալութիւնը—Նովրոսովայա փողոցի վրա, վրաց ազնուականների տանը։ Տելեֆոն № 108
114—120
(Ե. ա. Ֆ.)

Дозволено Цензурою. Тифлисъ, 28 іюля 1903 г.

Электропечатня Груз. Изд. Т—ва, Б. Ванкская ул.